ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ Եվրասիական զարգացման բանկի վճարված կանոնադրական կապիտալում Ռուսաստանի Դաշնության մասնաբաժնի մասի առուվաճառքի մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

նպատակ ունենալով հետագայում զարգացնել եւ ամրապնդել երկու երկրների միջեւ հավասարության եւ փոխադարձ շահի հիման վրա ավանդական բարեկամական հարաբերությունները,

ելնելով Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին 2006թ. հունվարի 12-ի համաձայնագրով կազմավորված Եվրասիական զարգացման բանկի գործունեությունը զարգացնելու շահագրգռվածությունից, որի մասնակիցներն են Կողմերը,

հաշվի առնելով Եվրասիական զարգացման բանկի մասնակիցների միջեւ կանոնադրական կապիտալի վերաբաշխման մասին Եվրասիական զարգացման բանկի խորհրդի 2022 թ. դեկտեմբերի 30-ի որոշումը,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրի առարկան

1. Սույն Համաձայնագրի դրույթները կիրառվում են Եվրասիական զարգացման բանկի վճարված կանոնադրական կապիտալում բացառապես

Ռուսաստանի Դաշնության մասնաբաժնի մասի նկատմամբ, որը սույն Համաձայնագրի ստորագրման օրվա դրությամբ կազմում է 64 000 000 ԱՄՆ դոլար նոմինալ արժեքով՝ Եվրասիական զարգացման բանկի 64 000 բաժնետոմս (այսուհետ՝ մասնակցության մասնաբաժին):

2. Սույն Համաձայնագրի իրականացման նպատակներով ռուսական կողմը պարտավորվում է ապահովել մասնակցության մասնաբաժնի փոխանցումը Հայաստանի Հանրապետության սեփականությանը, իսկ հայկական կողմը պարտավորվում է ապահովել Հայաստանի Հանրապետության կողմից մասնակցության մասնաբաժնի ընդունումը եւ վճարել մասնակցության մասնաբաժնի նոմինալ արժեքը՝ սույն Համաձայնագրով նախատեսված պայմաններով եւ կարգով:

Մասնակցության մասնաբաժնի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը ծագում է սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից:

Հոդված 2

Կողմերի լիազորված մարմինները

Սույն Համաձայնագրի իրականացման համար պատասխանատու՝ Կողմերի լիազորված մարմիններն են.

ռուսական կողմից՝ Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարությունը,

հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

Կողմերը դիվանագիտական ուղիներով անհապաղ գրավոր ծանուցումներ են ուղարկում սույն Համաձայնագրի իրականացման համար

պատասխանատու՝ Կողմերի լիազորված մարմինների անվանումների փոփոխման եւ (կամ) նրանց գործառույթների՝ այլ մարմիններին փոխանցման մասին:

Հոդված 3

Վճարման կարգը

1. Ռուսական կողմի օգտին հայկական կողմի կողմից մասնակցության մասնաբաժնի դիմաց վճարումն իրականացվում է ռուսական կողմի օգտին հայկական կողմի կողմից վճարումների կատարման ժամանակացույցին համապատասխան՝ սույն Համաձայնագրի հավելվածի համաձայն (այսուհետ՝ ժամանակացույց):

2. Սույն Համաձայնագրով վճարումներն իրականացվում են ռուսական ռուբլիով՝ վճարման ամսաթվից 2 աշխատանքային օր առաջ Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի կողմից սահմանված՝ ռուսական ռուբլու նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքով:

Սույն կետի համաձայն հաշվարկված վճարման գումարը կլորացվում է ստորակետից հետո մինչև 2 նիշ:

3. Հայկական կողմի կողմից սույն Համաձայնագրով վճարումը համարվում է կատարված, եթե ժամանակացույցով նախատեսված համապատասխան վճարման օրը Դաշնային գանձապետարանի միջտարածաշրջանային գործառնությունների վարչության՝ Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկում բացված հաշվին մուտք է եղել ժամանակացույցով սահմանված չափով վճարման գումար, որը հաշվարկված է սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան:

Դաշնային գանձապետարանի միջտարածաշրջանային

գործառնությունների վարչության՝ Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկում բացված հաշվի վավերապայմանների մասին ռուսական կողմի լիազորված մարմինը հայկական կողմի լիազորված մարմնին տեղեկացնում է վճարման օրվանից առնվազն 30 օր առաջ:

4. Հայկական կողմի կողմից սույն Համաձայնագրին համապատասխան վճարման ենթակա բոլոր գումարները չեն ծանրաբեռնվում որեւէ հարկով եւ վճարվում են առանց որեւէ սահմանափակումների, նվազեցումների, մասհանումների կամ փոխհատուցման պահումների:

Հոդված 4

Հատուկ պայմանները

1. Եթե ժամանակացույցին համապատասխան հայկական կողմի վճարումը չի կատարվել կամ կատարվել է ոչ լրիվ ծավալով, ապա սույն Համաձայնագրով հայկական կողմի պարտավորությունը համարվում է չկատարված, եւ ժամանակացույցի շրջանակներում հայկական կողմի կողմից փաստացի վճարված գումարը հանած՝ սույն Համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին կետով սահմանված չափով մասնակցության մասնաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը հետ է փոխանցվում Ռուսաստանի Դաշնությանը՝ հայկական կողմի կողմից վճարումը չկատարելու օրվան հաջորդող օրվանից:

Այն դեպքում, երբ հայկական կողմի վճարումն ամբողջ ծավալով չի իրականացվել, ապա իրականացված վճարի վերադարձման կարգը Կողմերը սահմանում են սույն Համաձայնագրին կից լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով :

2. Սույն Համաձայնագրի գործողությունը դադարում է սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան մասնակցության մասնաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը Ռուսաստանի Դաշնությանը հետ փոխանցվելու օրվանից:

Հոդված 5

Վեճերը եւ տարաձայնությունները

Վեճերը եւ տարաձայնությունները, որոնք Կողմերի միջեւ կարող են ծագել սույն Համաձայնագրի կիրառման եւ մեկնաբանման առնչությամբ, կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 6

Փոփոխություններ

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք կկազմեն դրա անբաժանելի մասը եւ կձեւակերպվեն առանձին արձանագրություններով:

Հոդված 7

Ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից եւ գործում է մինչեւ Կողմերի կողմից սույն Համաձայնագրից բխող

բոլոր պարտավորություններն ամբողջությամբ կատարելը կամ սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածին համապատասխան մասնակցության մասնաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը Ռուսաստանի Դաշնությանը հետ փոխանցվելը:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2023 թվականի Դեկտեմբեր «24»-ին, երկու օրինակից, յուրաքանչյուրը հայերենով եւ ռուսերենով, ընդ որում, երկու տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթները մեկնաբանելիս տարաձայնությունների դեպքում Կողմերը հիմք են ընդունում ռուսերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝	**Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից՝**

Հավելված

Հայաստանի Հանրապետության կառավարության
եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության
միջեւ Եվրասիական զարգացման բանկի
վճարված կանոնադրական կապիտալում
Ռուսաստանի Դաշնության մասնաբաժնի մասի
առուվաճառքի մասին համաձայնագրի

Վճարումների ժամանակացույցը

Վճարման ամսաթիվը	**Ընդհանուր գումարից վճարման մասնաբաժինը, տոկոս**	**Վճարման չափը, ԱՄՆ դոլար**
սեպտեմբերի 2, 2024 թ.	25%	16 000 000,00
սեպտեմբերի 2, 2025 թ.	25%	16 000 000,00
սեպտեմբերի 2, 2026 թ.	25%	16 000 000,00
սեպտեմբերի 2, 2027 թ.	25%	16 000 000,00

С О Г Л А Ш Е Н И Е

между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации о купле-продаже части доли Российской Федерации в оплаченном уставном капитале Евразийского банка развития

Правительство Республики Армения и Правительство Российской Федерации, далее именуемые Сторонами,

в целях дальнейшего развития и укрепления традиционно дружественных отношений между двумя странами на основе равенства и взаимной выгоды,

исходя из заинтересованности в развитии деятельности Евразийского банка развития, образованного Соглашением об учреждении Евразийского банка развития от 12 января 2006 г., участниками которого являются Стороны,

с учетом решения совета Евразийского банка развития о перераспределении уставного капитала между участниками Евразийского банка развития от 30 декабря 2022 г.,

согласились о нижеследующем:

Статья 1

Предмет Соглашения

1. Положения настоящего Соглашения применяются исключительно к части доли Российской Федерации в оплаченном уставном капитале Евразийского банка развития, составляющей 64 000 акций Евразийского банка развития номинальной стоимостью 64 000 000 долларов США на дату подписания настоящего Соглашения (далее - доля участия).

2. В целях реализации настоящего Соглашения Российская Сторона обеспечивает передачу в собственность Республике Армения доли участия, а Армянская Сторона обеспечивает принятие Республикой Армения доли участия и оплачивает долю участия по номинальной стоимости на условиях и в порядке, которые предусмотрены настоящим Соглашением.

Право собственности Республики Армения на долю участия возникает с даты вступления в силу настоящего Соглашения.

Статья 2

Уполномоченные органы Сторон

Уполномоченными органами Сторон, ответственными за реализацию настоящего Соглашения, являются:

от Российской Стороны – Министерство финансов Российской Федерации;

от Армянской Стороны – Министерство финансов Республики Армения.

Стороны незамедлительно направляют по дипломатическим каналам уведомления в письменной форме об изменении наименований и (или) о передаче другим органам функций уполномоченных органов Сторон, ответственных за реализацию настоящего Соглашения.

Статья 3

Порядок оплаты

1. Оплата Армянской Стороной в пользу Российской Стороны доли участия осуществляется в соответствии с графиком платежей Армянской Стороны в пользу Российской Стороны согласно приложению к настоящему Соглашению (далее - график).

2. Платежи по настоящему Соглашению осуществляются в российских рублях по курсу доллара США к российскому рублю, установленному Центральным банком Российской Федерации на дату за 2 рабочих дня до даты платежа. Сумма платежа, рассчитанная в соответствии с настоящим пунктом, округляется до 2 знаков после запятой.

3. Платеж Армянской Стороны по настоящему Соглашению признается исполненным, если в день соответствующего платежа, предусмотренного графиком, на счет Межрегионального операционного управления Федерального казначейства, открытый в Центральном банке Российской Федерации поступила сумма платежа в размере, установленном графиком, рассчитанная в соответствии с пунктом 2 настоящей статьи.

Реквизиты счета Межрегионального операционного управления Федерального казначейства, открытого в Центральном банке Российской Федерации, доводятся уполномоченным органом Российской Стороны до уполномоченного органа Армянской Стороны в срок не менее чем за 30 дней до даты платежа.

4. Все суммы, подлежащие уплате Армянской Стороной в соответствии с настоящим Соглашением, не обременяются какими бы то ни было налогами и выплачиваются без каких-либо ограничений, вычетов, изъятий или компенсационных удержаний.

Статья 4

Особые условия

1. В случае если платеж Армянской Стороны в соответствии с графиком не осуществлен или осуществлен не в полном объеме, обязательство Армянской Стороны по настоящему Соглашению признается неисполненным и право собственности на долю участия в размере, определенном пунктом 1 статьи 1 настоящего Соглашения, за вычетом фактически уплаченной Армянской Стороной суммы в рамках графика, переходит обратно к Российской Федерации со дня, следующего за датой неисполнения платежа Армянской Стороны.

В случае если платеж Армянской Стороны осуществлен не в полном объеме, порядок возврата осуществленного платежа определяется Сторонами путем заключения дополнительного соглашения к настоящему Соглашению.

2. Действие настоящего Соглашения прекращается с даты обратного перехода к Российской Федерации права собственности на долю участия в соответствии с пунктом 1 настоящей статьи.

Статья 5

Споры и разногласия

Споры и разногласия, которые могут возникнуть между Сторонами относительно применения и толкования настоящего Соглашения, разрешаются ими путем переговоров и консультаций.

Статья 6

Изменения

По взаимному согласию Сторон в настоящее Соглашение могут быть внесены изменения, которые являются его неотъемлемой частью и оформляются отдельными протоколами.

Статья 7

Вступление в силу

Настоящее Соглашение вступает в силу с даты получения по дипломатическим каналам последнего письменного уведомления о выполнении Сторонами внутригосударственных процедур, необходимых для его вступления в силу, и действует до полного исполнения Сторонами всех обязательств, вытекающих из настоящего Соглашения, или обратного перехода к Российской Федерации права собственности на долю участия в соответствии со статьей 4 настоящего Соглашения.

Совершено в г. Москва „24" марта 2023 г.
в двух экземплярах, каждый на русском и армянском языках, при этом оба текста имеют одинаковую силу. В случае расхождений при толковании положений настоящего Соглашения Стороны обращаются к тексту на русском языке.

За Правительство
Республики Армения

За Правительство
Российской Федерации

ПРИЛОЖЕНИЕ
к Соглашению между
Правительством Республики Армения
и Правительством Российской Федерации
о купле-продаже части доли
Российской Федерации
в оплаченном уставном капитале
Евразийского банка развития

ГРАФИК ПЛАТЕЖЕЙ

Дата платежа	Доля от общей суммы платежа, процентов	Размер платежа, долларов США
2 сентября 2024 г.	25	16000000
2 сентября 2025 г.	25	16000000
2 сентября 2026 г.	25	16000000
2 сентября 2027 г.	25	16000000

_____

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2023 թվականի մարտի 24-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Եվրասիական զարգացման բանկի վճարված կանոնադրական կապիտալում Ռուսաստանի Դաշնության մասնաբաժնի մասի առուվաճառքի մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ

Նելլի Սարոյան